ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 81

ք. Երևան 11 .09.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Գուրգեն Շմավոնյանի միջև 26.04.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-8/5-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ա/Ձ Գուրգեն Շմավոնյանը 2023թ. 2-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 31.05.2023թ. պետք է մատակարարեր 20 հատ Բազկաթոռներ /Բազկաթոռ համակարգչի/ և 80 հատ Աթոռներ /Աթոռ փափուկ մետաղական կարկասով/, որոնք չի մատակարարել:

Հաշվի առնելով, որ Ա/Ձ Գուրգեն Շմավոնյանը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ Ա/Ձ Գուրգեն Շմավոնյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ